ՀՈԲԵԼՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, բ.գ.դ.
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտ

ԱԼԲԵՐՏ ՄՈՒՇԵՂՅԱՆԻ ՖԵՆՈՄԵՆԸ

Դժվար է կռահել այնպիսի մեծանուն մեր գրականագիտության մեջ, որ քայլում է մեր կողքին՝ հայրենի հողը անձայն շոշափելով, զանգում է և խոսում երկար, հրճվանքով գիտական իր հայտնագործումների մասին, ասես այրվում է արածի ներքին կրակով, ում խոսքն, անշուշտ, ոչ թե աչքի տեսածի, այլ հոգուն տրված լույսի շնորհով է աշխարհ եկել: Նա՛ է,ահա, բանասիրության դոկտոր Ալբերտ Մուշեղյանը, որ ինը տասնամյակն է արդեն բոլորել, հայագիտության մերօրյա նահապետն է այսօր, որ, կուտակած ժառանգությամբ, զարմացրել ու զարմացնում է քանի տասնամյակ: Ավելին, նույն որոնողն է, ինքն իրենից դժգոհը, չհամակերպվողը շուրջը կատարվող ամեն ինչի հանդեպ, և գրիչը ձեռքից ցած չի իջնում երբեք... Ուստի նրան բնութագրելիս բառերն անգամ կորցնում են իրենց իմաստը և կշիռը, հասարականում... Բայց, թերևս, պետք է ասվի, որ Ա. Մուշեղյանի գիտական վաստակը մեծ է հայագիտության այնպիսի ոլորտներում, ինպիսիք բանասիրությունն է, պատմագիտությունը, գրականագիտությունը: Լայն է, անշուշտ, Մուշեղյանի հետազոտությունների ոլորտը և ժամանակագրությունը: Դեռևս չորս տասնամյակ առաջ Ա. Մուշեղյանի գրական մուտքը նշանավորվեց Ավետիք Իսահակյանի վաղ տարիների (1887-1898) ստեղծագործության քննությամբ, որ, միաժամանակ, տարեգրություն էր և հիմք էր ստեղծում Իսահակյանի գիտական կենսագրության ստեղծման, գրողի աշխարհայեցության հասունացման նկարագրության և հետազոտության համար: Մուշեղյանի մենագրության (1983) աղբյուրը Իսահակյանի վավերագրերն էին, արխիվային նյութեր, որոնք իսահակյանագիտության համար կարևոր նյութ է արդեն վերջին տասնամյակներին մեր գրականագիտության համար՝ մեկնաբա-

նելու Իսահակյանի ուսումնառության տարիների, գրական նախասիրությունների ձևավորման, եվրոպական փիլիսոփայության փորձառության, մասնավորապես՝ Նիցշեի ուսմունքի հետ առնչությունները, խնդիրները:

Ինչ խոսք, եթե Իսահակյանի մասին մենագրությունը նախակարապետն էր Մուշեղյանի ոճի ու հետազոտության յուրահատկության, ապա հետագա տասնամյակներում այն հարստացավ նորանոր գծերով, որոնք առնչվում են արդեն 5-րդ դարի հայ մատենագրության խնդիրներին, որի կենտրոնը Մովսես Խորենացուն նվիրված մենագրությունն է (2007), որին նախորդում էր «5-րդ դարի հայ մատենագրության ժամանակագրական խնդիրներ» աշխատությունը: Երկու այս աշխատությունները շաղկապված են միմյանց հարցադրումների ընդհանրությամբ, փաստերը համադրելու և վերլուծելու հիմնավորվածությամբ: Ա. Մուշեղյանի քննող միտքը ճշգրտում է հայագիտության հիմնարար հարցեր, ինչպիսիք հայ գրավոր մշակույթի սկզբնավորման և Ագաթանգեղոսի Պատմության գրության ժամանակն է,որ ավանդական ընդունված ըմբռնումից (460-ական թթ.) Մուշեղյանը առաջ է բերում մինչև 410-ական թվականները՝ հիմնավորելով Ագաթանգեղոսի և Կորյունի երկերի համեմատական քննության միջոցով: Ըստ այդմ, Ագաթանգեղոսի Պատմությունը գրված է Կորյունի երկից առաջ, որը համընկնում է գրերի գյուտի, Մաշտոցի և Պարթևի գործունեության շրջանի հետ: Ակամա հարց է առաջանում, ի վերջո, երբ Մաշտոցը և Պարթևը հիմնում էին հայ դպրոցը, ի՞նչ էին ուսուցանում դպրոցում, եթե ոչ Գ. Լուսավորչի վարքը և քրիստոնության հիմնումը Հայաստանում: Մի՞թե միայն թարգմանություններով հնարավոր էր պահպանել և զարգացնել դպրոցը, եթե նրա հիմքում չլիներ ազգայինի գախափարը ու նրա պատմությունը: Մուշեղյանը, անշուշտ, հարցադրումը ընկալում է լայն՝ դարի, ժամանակի տեսանկյունից, հիմնավորում հարցը մշակութային տեսադաշտում և, եթե անգամ հեղինակի (Ագաթանգեղոսի) հարցը մնում է դեռևս բանավեճի առարկա, ապա հարցի նորությունը դրանից չի տուժում:

Այնուամենայնիվ, գլխավորը, որ պակասում է թերևս մեր պատմաբանասիրական մտքին, բնագրի վրա չհիմնվող ընթերցումն է: Մուշեղյանը գրաբարի խորը իմացությամբ հաղթահարում է այդ հարցը: Նրա վստահելի սկզբնաղբյուրը գի-

տաքննական բնագիրն է, պատմիչների հետ կապված վիճելի հարցերը քննախույզ հայացքով վերլուծելը: Վճռական է այս հարցում «Չորս Հայքերի առեղծվածը» ուսումնասիրությունը, որ թե՛ «Մովսես Խորենացու դարը», թե՛ «5-րդ դարի հայ մատենագրության ժամանակագրական խնդիրներ» աշխատությունների ելակետն է: Չորրորդ Հայք անվանումը Անանիա Շիրակացու (7-րդ դար) «Աշխարհացույցի» վկայությունն է, որով Խորենացու ժամանակը հայագետների կողմից տեղափոխվում է 5-րդ դարից ետ՝ մինչև 6-7, մինչև 9-րդ դարը: Մինչդեռ Մուշեղյանը, ձեռագրագիտական նյութերի հիման վրա, հետազոտելով Խորենացու ժամանակի հարցը, եզրակացնում է.«Աշխարացույցի և Խորենացու պատմության հեղինակները միևնույն անձն են» (էջ 61): Այս իրադարձության հիմքում պարսիկների Բյութանիա կատարած արշավանքն է 608 թ.-ին: Մուշեղյանը 4-րդ դարի լատին պատմագիր Ամմիանոս Մարկելինոսի «Հռոմեական պատմության» մեջ հայտնաբերում է, որ պարսիկները առաջին անգամ Բյութանիան գրավել են 330-ական թթ. վերջին, 4-րդ դարում և հմուտ պատմաբանի ու բանասերի փաստարկով հերքում հայագետների վերը նշված վարկածը, ապացուցում Խորենացու Պատմության հավաստիությունը:

Անհերքելի փաստ է, որ, երբ Խորենացուն տեղաշարժում են 5-րդ դարից, փշրվում է հայոց պատմության ողնաշարը: Ա. Մուշեղյանը գիտական փաստարկներով հետամուտ է հերքելու ի հայտ եկած այն կեղծ թեզերը, որոնք հայտնի են սկսած Լակրոզից (18-րդ դար) մինչև Գուդշմիդտ, Օ. Կարիեր, Գ. Խալաթյանց, որոնք Խորենացուն տանում են մինչև 6-7-րդ դարերը: Նույն կարծիքն են պաշտպանում Յո. Մարկվարտը, Հ. Հյուբշմանը, Ն. Ադոնցը: Բանավեճը շարունակվում է մինչև մեր օրերը, մինչև Կ. Թումանովի և Ռ. Թոմսոնի դրույթները, նույն շնչով նրանց արձագանքում Ռ. Հովհաննիսյանը: Ա. Մուշեղյանը իր աշխատություններում, հերքելով այս տրամաբանական շղթան, կտրում է այդ գորդյան հանգույցը, Խորենացուն զեղծարար ու խաբեբա համարողներին պարտադրում հիմնավոր գիտական պատասխաններ: Օրինակները բազմաթիվ են, բայց հանգուցայինը **Վասպուրական, սեպուհ և մարդպետ** բառերի բացատրությունն է: Մուշեղյանի մեկնաբանությամբ Վասպուրականը 7-րդ դարում հիշատակված նահանգանունը չէ, այլ, ըստ 3-րդ դարի Սասանյան

վիմագիր արձանագրության, թագաժառանգ տոհմի նախարարների պարթևական անվանումը, որ Արշակունիների Հայաստանում «պատուականագոյն» տիտղոս է «որպէս առաւել թագաւորազն», «զարմս թագաւորաց», որոնք հողային ժառանգություն էին ստանում թագավորական ոստանից արքունական կալվածքների հաշվին, առանձնացված գավառներում, բաժին ստանում արքունական գանձարանից: Վասպուրականը Մուշեղյանի մեկնաբանությամբ պահլավական ծագում ունի, որի **ական** վերջածանցը գրաբարին բնորոշ հոգնակիակերտ է և նշանակում է **տան որդի**: Եվ, ինչպես **սեպուհ** բառից առաջացել է **սեփական**, այնպես էլ **վասպուհրից՝ վասպուրական**: Իսկ **մարդպետ** տերմինը մարզպետի աղավաղված ձևն է, որի ուղիղ ձևը վկայված է Եղիշեի մոտ:

Ալբերտ Մուշեղյանի հայագիտական ներդրումը, իհարկե, մեծ է մանավանդ մեր օրերում: Նրա հետազոտության նյութը ոչ միայն հինգերորդ դարն է՝ Ագաթանգեղոսը, Կորյունը,- Խորենացին, Եղիշեն, այլև նախամաշտոցյան շրջանը՝ Արարատյան (Ուրարտու) թագավորության, Տիգրան Երվադյանի, Տիգրան Մեծի և Արամի կերպարները, Վանի թագավորության առեղծվածը, հայ ժողովրդի ծագումնաբանության, պետությունն հիմնելու և դրանով իր պատմության, գոյության իրավունքը հաստատելու մեջ է, որի գաղափարին լծված է Ա. Մուշեղյանը մինչև օրս: Ուրեմն, ոտքի ելնենք՝ պատիվ անելու հայագիտության վաստակած նահապետին: